Հավելված 5

«ԷԱՃԱՊՁԲ ՀՀՎԱ-ԷԱՃԾՁԲ-21/6 »* ծածկագրով

էլեկտրոնային աճուրդի հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀՀՎԱ-ԷԱՃԾՁԲ-21/6-1

ք. Երևան ____/_____/2021թ.

« Վարչապետի աշխատակազմ »-ը ի դեմս Գարիկ Բոշյան ի, որը գործում է « Վարչապետի աշխատակազմ »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և « ՀՀ պետական կառավարման ակադեմիա ՊՈԱԿ »-ը, ի դեմս տնօրեն Խ.Ղազեյան ի, որը գործում է « ՀՀ պետական կառավարման ակադեմիա ՊՈԱԿ »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Կատարող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Վարչապետի աշխատակազմի կարիքների համար աշխատակիցների վերապատրաստման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված էլեկտրոնային աճուրդի հայտարարություն և հրավեր ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների։

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրին համախատասխան և N 2 հավելվածով սահմանված ծառայության մատուցման ժամանակացույցով նախատեսված ժամկետներով

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N1 և/կամ N 2 հավելվածին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և/կամ N 2 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը։

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ։

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը։

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին։

2.4.4 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում շինարարական աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:6

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ

էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 235412.00 AMD(երկու հարյուր երեսունհինգ հազար չորս հարյուր տասներկուդրամ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:7 17

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը։

ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար։ Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով։ Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում։8

4.2 Պատվիրատուն մատուցված ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով։ Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիներին։ Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը։

5. **ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար։

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի *0,5* (*զրո ամբողջ հինգ տասնորդական*) տոկոսի չափով։921Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում։

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի *0,05* (*զրո ամբողջ հինգ հարյուրերորդական*) տոկոսի չափով։

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ։

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն

չվճարված գումարի *0,05* (*զրո ամբողջ հինգ հարյուրերորդական*) տոկոսի չափով։

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով։

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց։

6. **ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել։ Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը։ Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին։

7. **ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Պատվիրատուի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը։

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը [5]:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ

պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության։ Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության։

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար։ Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է։

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում։

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը։

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման։

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը։

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը

գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

11[6]

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է

պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

__

13[8]

-

-

8. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ	**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
Վարչապետի աշխատակազմ	**ՀՀ պետական կառավարման ակադեմիա ՊՈԱԿ**
Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1	**ՀՀ, ք.Երևան, Կիևյան-8**
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	**Երևանի թիվ 1 ՏԳԲ**
900011036879	**900018005646**
02505554	**00035088**

/ստորագրություն/

Կ.Տ

Digitally signed by BOSHYAN GARIK 1404880475
Date: 2021.08.19 09:37:13

Digitally signed by GHAZEYAN KHACHATUR 2408850088
Date: 2021.08.17 12:00:09 AMT

/ստորագրություն/

Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ։

17[6]Կիրառվում է, եթե կնքվում էնախագծայինփասաթղթերիքաղաքաշինականփորձաքննության ծառայություններիմատուցմանպայմանագիր

[17]Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են։

[8]Կատարողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից։ Ընդ որում կնքվելիքպայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուիև Կատարողիմիջև համաձայնեցված չափով։Եթեպայմանագրովչինախատեսվումկանխավճարիհատկացում, ապասույն կետըհանվումէնախագծից։

[9]Եթեպայմանագիրըկնքվելէ«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապատուգանքըհաշվարկվումէայնհամաձայնագրիգնինկատմամբ, որի շրջանակումարձանագրվելէստանձնվածպարտավորությունների չկատարմանկամչպատշաճկատարմանհանգամանքը։

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ։

[10]Պետականբյուջեիմիջոցներիհաշվինպարտավորություններչառաջացնող գնումներիդեպքումսույննախադասությունըպայմանագրիցհանվումէ։

[11] Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով։

[12]Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով։

[13]*Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով:Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված N 1
____/_____/2021թ. կնքված
ՀՀՎԱ-ԷԱՃԾՁԲ-21/6 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ դրամ

Ծառայության			
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	79631200/37	աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ-1 Սահմանադրական իրավունք •ՀՀ Սահմանադրություն: •Պետական կառավարման սահմանադրական հիմունքներ: Վերապատրաստման ենթակա քաղ. ծառ. թվաքանակը՝ 19 Ծրագրի տևողությունը՝ 24 ժամ *Ծանոթություն ՀՀ պետական բյուջեի միջոցներով քաղաքացիական ծառայողների վերապատրաստում իրականացնող կազմակերպությունները պետք է համապատասխանեն ՀՀ առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 9-ի «Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կարգը, վերապատրաստում իրականացնող կազմակերպություններին ներկայացվող հիմնական չափանիշները, կրեդիտների սահմանման հիմնական սկզբունքները, կարիքները գնահատելու և անհատական ծրագիր

			կազմելու, ինչպես նաև համապատասխան մարմնի վերապատրաստման ծրագիրը կազմելու, միջազգային հավաստագրերի ճանաչելիության սկզբունքները, տեսակները սահմանելու մասին» N 2-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 3-րդ գլխի չափանիշներին: Վերապատրաստումներն անհրաժեշտ է իրականացնել վերոհիշյալ որոշմամբ սահմանված պահանջներով և դասընթացները պետք է պարունակեն ուսումնական նյութի յուրացումը ստուգող 20-40 թեստային առաջադրանքից կազմված թեստ: Վերապատրաստման գործընթացն իրականացվելու է ՀՀ առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 9-ի N 2-Ն որոշմամբ սահմանված ընթացակարգերին համապատասխան: Վճարումը կիրականացվի փաստացի մատուցված ծառայությունների դիմաց՝ վերապատրաստմանը մասնակցած աշխատակիցների թվաքանակին համապատասխան:
3	79631200/39	աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ-3 Մարդկային ռեսուրսների կառավարում •Մարդկային ռեսուրսների կառավարումը պետական կառավարման համակարգում: •Մարդկային ռեսուրսների կառավարման նորմատիվ-իրավական ապահովում: •Անձնակազմի և կադրային ներուժի գնահատում: •Կադրային պահանջարկի պլանավորում: •Անձնակազմի շարժի կառավարում: •Անձնակազմի մոտիվացում: •Անձնակազմի վարքագծի կառավարում: •Բարեվարքություն: •Բարենպաստ հոգեբանական միջավայրի ստեղծում: •Անձնակազմի սոցիալական պաշտպանվածություն: •Աշխատանքի կատարողականի գնահատում և կառավարում: Վերապատրաստման ենթակա քաղ. ծառ. թվաքանակը՝ 4 Ծրագրի տևողությունը՝ 24 ժամ *Ծանոթություն ՀՀ պետական բյուջեի միջոցներով քաղաքացիական ծառայողների

			վերապատրաստում իրականացնող կազմակերպությունները պետք է համապատասխանեն ՀՀ առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 9-ի «Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կարգը, վերապատրաստում իրականացնող կազմակերպություններին ներկայացվող հիմնական չափանիշները, կրեդիտների սահմանման հիմնական սկզբունքները, կարիքները գնահատելու և անհատական ծրագիր կազմելու, ինչպես նաև համապատասխան մարմնի վերապատրաստման ծրագիրը կազմելու, միջազգային հավաստագրերի ճանաչելիության սկզբունքները, տեսակները սահմանելու մասին» N 2-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 3-րդ գլխի չափանիշներին: Վերապատրաստումներն անհրաժեշտ է իրականացնել վերոհիշյալ որոշմամբ սահմանված պահանջներով և դասընթացները պետք է պարունակեն ուսումնական նյութի յուրացումը ստուգող 20-40 թեստային առաջադրանքից կազմված թեստ: Վերապատրաստման գործընթացն իրականացվելու է ՀՀ առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 9-ի N 2-Ն որոշմամբ սահմանված ընթացակարգերին համապատասխան: Վճարումը կիրականացվի փաստացի մատուցված ծառայությունների դիմաց՝ վերապատրաստմանը մասնակցած աշխատակիցների թվաքանակին համապատասխան:
4	79631200/40	աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ-4 Հանրային ծառայության համակարգը Հայաստանի Հանրապետությունում •Հանրային ծառայության արդի հիմնախնդիրները: •Հանրային ծառայության համակարգի կատարելագործումը: •Հանրային ծառայության համակարգերը, դրանցում պաշտոնի զբաղեցման և առաջխաղացման առանձնահատկությունները: •Էթիկայի կանոնակարգի տեղը և

			դերը հանրային ծառայողների բարոյական զարգացման կառավարման համակարգում: Վերապատրաստման ենթակա քաղ. ծառ. թվաքանակը՝ 8 Ծրագրի տևողությունը՝ 24 ժամ *Ծանոթություն ՀՀ պետական բյուջեի միջոցներով քաղաքացիական ծառայողների վերապատրաստում իրականացնող կազմակերպությունները պետք է համապատասխանեն ՀՀ առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 9-ի «Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կարգը, վերապատրաստում իրականացնող կազմակերպություններին ներկայացվող հիմնական չափանիշները, կրեդիտների սահմանման հիմնական սկզբունքները, կարիքները գնահատելու և անհատական ծրագիր կազմելու, ինչպես նաև համապատասխան մարմնի վերապատրաստման ծրագիրը կազմելու, միջազգային հավաստագրերի ճանաչելիության սկզբունքները, տեսակները սահմանելու մասին» N 2-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 3-րդ գլխի չափանիշներին: Վերապատրաստումներն անհրաժեշտ է իրականացնել վերոհիշյալ որոշմամբ սահմանված պահանջներով և դասընթացները պետք է պարունակեն ուսումնական նյութի յուրացումը ստուգող 20-40 թեստային առաջադրանքից կազմված թեստ: Վերապատրաստման գործընթացն իրականացվելու է ՀՀ առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 9-ի N 2-Ն որոշմամբ սահմանված ընթացակարգերին համապատասխան: Վճարումը կիրականացվի փաստացի մատուցված ծառայությունների դիմաց՝ վերապատրաստմանը մասնակցած աշխատակիցների թվաքանակին համապատասխան:
7	79631200/43	աշխատակիցների վերապատրաստման	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ-7 Միջազգային հարաբերություններ և դիվանագիտություն •ՀՀ

		ծառայություններ	միջազգային ինտեգրացումը. հեռանկարներ և մարտահրավերներ: •ՀՀ արտաքին քաղաքականության գերակա ուղղությունները: •Ազգային անվտանգության հիմնախնդիրները: •Գլոբալացում և ազգային ինքնություն: •Պետական քաղաքականության տեղեկատվական սպասարկումը: •ՀՀ արտաքին քաղաքականության առևտրատնտեսական կապերի հիմնահարցերը: Վերապատրաստման ենթակա քաղ. ծառ. թվաքանակը՝ 9 Ծրագրի տևողությունը՝ 24 ժամ *Ծանոթություն ՀՀ պետական բյուջեի միջոցներով քաղաքացիական ծառայողների վերապատրաստում իրականացնող կազմակերպությունները պետք է համապատասխանեն ՀՀ առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 9-ի «Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կարգը, վերապատրաստում իրականացնող կազմակերպություններին ներկայացվող հիմնական չափանիշները, կրեդիտների սահմանման հիմնական սկզբունքները, կարիքները գնահատելու և անհատական ծրագիր կազմելու, ինչպես նաև համապատասխան մարմնի վերապատրաստման ծրագիրը կազմելու, միջազգային հավաստագրերի ճանաչելիության սկզբունքները, տեսակները սահմանելու մասին» N 2-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 3-րդ գլխի չափանիշներին: Վերապատրաստումներն անհրաժեշտ է իրականացնել վերոհիշյալ որոշմամբ սահմանված պահանջներով և դասընթացները պետք է պարունակեն ուսումնական նյութի յուրացումը ստուգող 20-40 թեստային առաջադրանքից կազմված թեստ: Վերապատրաստման գործընթացն իրականացվելու է ՀՀ առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 9-ի N 2-Ն որոշմամբ սահմանված ընթացակարգերին համապատասխան: Վճարումը կիրականացվի փաստացի մատուցված

			ծառայությունների դիմաց՝ վերապատրաստմանը մասնակցած աշխատակիցների թվաքանակին համապատասխան:
9	79631200/45	աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ-9 Ֆինանսաբյուջետային քաղաքականություն •Ֆինանսների կառավարումը պետական կառավարման համակարգում: •Բյուջեի ձևավորում: •Ծրագրային բյուջետավորում: •Բյուջեի կատարում: •Ֆինանսատնտեսագիտական վերլուծություններ: •Հանրային հատվածի հաշվապահական հաշվառում: •Հարկեր և պարտադիր այլ վճարներ: Վերապատրաստման ենթակա քաղ. ծառ. թվաքանակը՝ 4 Ծրագրի տևողությունը՝ 24 ժամ *Ծանոթություն ՀՀ պետական բյուջեի միջոցներով քաղաքացիական ծառայողների վերապատրաստում իրականացնող կազմակերպությունները պետք է համապատասխանեն ՀՀ առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 9-ի «Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կարգը, վերապատրաստում իրականացնող կազմակերպություններին ներկայացվող հիմնական չափանիշները, կրեդիտների սահմանման հիմնական սկզբունքները, կարիքները գնահատելու և անհատական ծրագիր կազմելու, ինչպես նաև համապատասխան մարմնի վերապատրաստման ծրագիրը կազմելու, միջազգային հավաստագրերի ճանաչելիության սկզբունքները, տեսակները սահմանելու մասին» N 2-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 3-րդ գլխի չափանիշներին: Վերապատրաստումներն անհրաժեշտ է իրականացնել վերոհիշյալ որոշմամբ սահմանված պահանջներով և դասընթացները պետք է պարունակեն ուսումնական նյութի յուրացումը ստուգող 20-40 թեստային առաջադրանքից կազմված թեստ: Վերապատրաստման գործընթացն իրականացվելու է ՀՀ առաջին փոխվարչապետի

			2019 թվականի հունվարի 9-ի N 2-Ն որոշմամբ սահմանված ընթացակարգերին համապատասխան: Վճարումը կիրականացվի փաստացի մատուցված ծառայությունների դիմաց՝ վերապատրաստմանը մասնակցած աշխատակիցների թվաքանակին համապատասխան:
11	79631200/47	աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ-11 Գնումների գործընթաց •Գնումների մասին ՀՀ օրենսդրություն: •Գնման գործընթացի կարգավորումը և համակարգումը: •Գնում կատարելու ընթացակարգերը և դրանց կիրառման պայմանները: •Նախաորակավորման ընթացակարգեր: •Մրցույթի անցկացման կարգ: •Հայտեր: •Էլեկտրոնային աճուրդներ: •Խորհրդատվական ծառայություններ ձեռք բերելու առանձնահատկություններ: •Գնումների գործընթացի բողոքարկում: •Գնումներ կատարելու առանձնահատկությունները: Վերապատրաստման ենթակա քաղ. ծառ. թվաքանակը՝ 3 Ծրագրի տևողությունը՝ 24 ժամ *Ծանոթություն ՀՀ պետական բյուջեի միջոցներով քաղաքացիական ծառայողների վերապատրաստում իրականացնող կազմակերպությունները պետք է համապատասխանեն ՀՀ առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 9-ի «Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կարգը, վերապատրաստում իրականացնող կազմակերպություններին ներկայացվող հիմնական չափանիշները, կրեդիտների սահմանման հիմնական սկզբունքները, կարիքները գնահատելու և անհատական ծրագիր կազմելու, ինչպես նաև համապատասխան մարմնի վերապատրաստման ծրագիրը կազմելու, միջազգային հավաստագրերի ճանաչելիության սկզբունքները, տեսակները սահմանելու մասին» N 2-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 3-րդ գլխի չափանիշներին: Վերապատրաստումներն անհրաժեշտ

			է իրականացնել վերոհիշյալ որոշմամբ սահմանված պահանջներով և դասընթացները պետք է պարունակեն ուսումնական նյութի յուրացումը ստուգող 20-40 թեստային առաջադրանքից կազմված թեստ: Վերապատրաստման գործընթացն իրականացվելու է ՀՀ առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 9-ի N 2-Ն որոշմամբ սահմանված ընթացակարգերին համապատասխան: Վճարումը կիրականացվի փաստացի մատուցված ծառայությունների դիմաց՝ վերապատրաստմանը մասնակցած աշխատակիցների թվաքանակին համապատասխան:
14	79631200/50	աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ-14 Իրավական ակտերի մշակման առանձնահատկու-թյուններ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք և օրենքից բխող ենթաօրենս-դրական ակտեր, այդ թվում՝ •իրավաստեղծ գործընթացի ընդհանուր նկարագիրը. •օրինաստեղծ գործընթաց. •իրավական ակտերի մշակման տեխնիկա. •հղումների կիրարկումն իրավական ակտում. •իրավական ակտերի փորձաքննությունը և ժամկետները. •իրավական ակտերի մեկնաբանումը և պարզաբանումը. •հանրային քննարկումներ: Վերապատրաստման ենթակա քաղ. ծառ. թվաքանակը՝ 8 Ծրագրի տևողությունը՝ 16 ժամ *Ծանոթություն ՀՀ պետական բյուջեի միջոցներով քաղաքացիական ծառայողների վերապատրաստում իրականացնող կազմակերպությունները պետք է համապատասխանեն ՀՀ առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 9-ի «Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կարգը, վերապատրաստում իրականացնող կազմակերպություններին ներկայացվող հիմնական չափանիշները, կրեդիտների սահմանման հիմնական սկզբունքները, կարիքները գնահատելու և անհատական ծրագիր

			կազմելու, ինչպես նաև համապատասխան մարմնի վերապատրաստման ծրագիրը կազմելու, միջազգային հավաստագրերի ճանաչելիության սկզբունքները, տեսակները սահմանելու մասին» N 2-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 3-րդ գլխի չափանիշներին: Վերապատրաստումներն անհրաժեշտ է իրականացնել վերոհիշյալ որոշմամբ սահմանված պահանջներով և դասընթացները պետք է պարունակեն ուսումնական նյութի յուրացումը ստուգող 20-40 թեստային առաջադրանքից կազմված թեստ: Վերապատրաստման գործընթացն իրականացվելու է ՀՀ առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 9-ի N 2-Ն որոշմամբ սահմանված ընթացակարգերին համապատասխան: Վճարումը կիրականացվի փաստացի մատուցված ծառայությունների դիմաց՝ վերապատրաստմանը մասնակցած աշխատակիցների թվաքանակին համապատասխան:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ

Հասցե՝ Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

900011036879

02505554

Գարիկ Բոշյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

Digitally signed by BOSHYAN GARIK 1404880475
Date: 2021.08.19 09:38:33 GMT+04:00

ԿԱՏԱՐՈՂ

ՀՀ պետական կառավարման ակադեմիա ՊՈԱԿ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Կիևյան-8

Երևանի թիվ 1 ՏԳԲ

900018005646

00035088

Խ.Ղազեյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

Digitally signed by GHAZEYAN KHACHATUR 2408850088
Date: 2021.08.17 12:03:26 AMT

Հավելված N 2
____/_____/2021թ. կնքված
ՀՀՎԱ-ԷԱՃԾՁԲ-21/6 ծածկագրով պայմանագրի

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության					
չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
				հասցեն	ժամկետը**
դրամ	85272.00	85272.00	1	ՀՀ, Երևան քաղաքում Մատակարարի նշած հասցեում	2021 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակներ
դրամ	17952.00	17952.00	1	ՀՀ, Երևան քաղաքում Մատակարարի նշած հասցեում	2021 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակներ
դրամ	35904.00	35904.00	1	ՀՀ, Երևան քաղաքում Մատակարարի նշած հասցեում	2021 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակներ
դրամ	40932.00	40932.00	1	ՀՀ, Երևան քաղաքում Մատակարարի նշած հասցեում	2021 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակներ
դրամ	17952.00	17952.00	1	ՀՀ, Երևան քաղաքում Մատակարարի նշած հասցեում	2021 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակներ
դրամ	13464.00	13464.00	1	ՀՀ, Երևան քաղաքում Մատակարարի նշած հասցեում	2021 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակներ
դրամ	23936.00	23936.00	1	ՀՀ, Երևան քաղաքում Մատակարարի նշած հասցեում	2021 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակներ

* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ

մտնելու օրվանից սկսած:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ

Հասցե՝ Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

900011036879

02505554

Գարիկ Բոշյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

Digitally signed by BOSHYAN GARIK 1404880475
Date: 2021.08.19 09:40:13 GMT+04:00

ԿԱՏԱՐՈՂ

ՀՀ պետական կառավարման ակադեմիա ՊՈԱԿ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Կիևյան-8

Երևանի թիվ 1 ՏԳԲ

900018005646

00035088

Խ.Ղազեյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

Digitally signed by GHAZEYAN KHACHATUR 2408850088
Date: 2021.08.17 12:04:46 AMT

Հավելված N 3
____/_____/2021թ. կնքված
ՀՀՎԱ-ԷԱՃԾՁԲ-21/6 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			Հնվ.	Փտր.	Մրտ.	Ապր.	Մայ.	Հուն.	Հուլ.	Օգս.	Սեպ.	Հոկ.	Նոյ.	Դեկ.	Ընդամենը
1	79631200/37	աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ								17054.40	42636.00	85272.00	85272.00	85272.00	85272.00
3	79631200/39	աշխատակիցների վերապատրաստման ծառայու								3590.40	8976.00	17952.00	17952.00	17952.00	17952.00

		թյուններ													
4	79631200/40	աշխատակի ցների վերա պատրաստմ ան ծառայու թյուններ								7180.80	17952.00	35904.00	35904.00	35904.00	35904.00
7	79631200/43	աշխատակի ցների վերա պատրաստմ ան ծառայու թյուններ								8186.40	20466.00	40932.00	40932.00	40932.00	40932.00
9	79631200/45	աշխատակի ցների վերա պատրաստմ ան ծառայու թյուններ								3590.40	8976.00	17952.00	17952.00	17952.00	17952.00
11	79631200/47	աշխատակի ցների վերա պատրաստմ ան ծառայու թյուններ								2692.80	6732.00	13464.00	13464.00	13464.00	13464.00
14	79631200/50	աշխատակի ցների վերա պատրաստմ ան ծառայու թյուններ								4787.20	11968.00	23936.00	23936.00	23936.00	23936.00

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վարչապետի աշխատակազմ

Հասցե՝ Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

900011036879

02505554

Գարիկ Բոշյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

Digitally signed by BOSHYAN GARIK 1404880475
Date: 2021.08.19 09:42:18 GMT+04:00

ԿԱՏԱՐՈՂ

ՀՀ պետական կառավարման ակադեմիա ՊՈԱԿ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Կիևյան-8

Երևանի թիվ 1 ՏԳԲ

900018005646

00035088

Խ.Ղազեյան

_____

/ստորագրություն/

Կ.Տ

Digitally signed by GHAZEYAN KHACHATUR 2408850088
Date: 2021.08.17 12:05:45 AMT

Հավելված N 4
____/_____/2021թ. կնքված
ՀՀՎԱ-ԷԱՃԾՁԲ-21/6 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«___» «____» 20___ թ.
Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20__թ.
Պայմանագրի համարը՝ ՀՀՎԱ-ԷԱՃԾՁԲ-21/6-1
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «_____» «_____» 20___թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1	աշխատակիցների վերապատրաստման ծառ							

	այություններ							
3	աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ							
4	աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ							
7	աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ							
9	աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ							
11	աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ							
14	աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ							

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____

ստորագրություն

_____

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____

ստորագրություն

_____

ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված N 4.1
____/_____/2021թ. կնքված
ՀՀՎԱ-ԷԱՃԾՁԲ-21/6 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N_____

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Վարչապետի աշխատակազմ -ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ՀՀ պետական կառավարման ակադեմիա ՊՈԱԿ (այսուհետ՝ Կատարող)
միջև 20__թ._____ -ին կնքված N ՀՀՎԱ-ԷԱՃԾՁԲ-21/6-1 գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20__թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով
Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)
աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ	դրամ	
աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ	դրամ	
աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ	դրամ	
աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ	դրամ	
աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ	դրամ	
աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ	դրամ	
աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ	դրամ	

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____

ազգանուն, անուն

_____

Ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____

ազգանուն, անուն

_____

Ստորագրություն